

ՔԻԹԱՊՍԸ ԱՌՆԱԻՈՒՏՆԵՐԸ
ՆԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՆԱՌԱՔ ՏԱՌԵՐԸ

Երէկուան ժամանակի մէջ կարգալով Օր-
մանեան Սրբազանի «Ազգասպասուժ» էն քաղ-
ուած Հայերէն այբուբէնի գիւտին պատ-
մութիւնը, կուրծքս հպարտութեամբ ուռե-
ցաւ՝ մտածելով որ մենք Հայերս 1500 տա-
րիներէ ի վեր գիր ու գպրութիւն ունինք,
մինչ խեղճ Առնաւուտները «քիթապսըզ, կը
յորջորջուին մինչեւ այսօր գիր չունենալ-
նուն համար:

Իմ հպարտութիւնս աւելի ուռնացաւ երբ
միտքս բերի որ մեր այբուբէնը սովորական
այբուբէն մըն ալ չէ, այլ աստուածային
թաթով արձանագրուած, գրեթէ երկինքէն
զրկուած այբուբէն մը: Եւ ինչ ալ հարուստ
այբուբէն, Աստուած իմ, 38 տա՛ռ, մինչ
վեց մեծ պետութիւնները, ամէն մէկը հա-
զիւ 20—25 տառ ունին իրենց տրամագրու-
թեան տակ:

Իրա ցնէ փառապանծ հանդէս մը պիտի
ըլլայ մեր տպագրութեան չորսհարիւրամ-
եակի ու մեր գիրերու գիւտին հազարհինգ-
հարիւրամեակի միացեալ հանդէսը զոր տօ-
նելու կը պատրաստուինք:

Խեղճ Առնաւուտներ, որոնք այսպիսի
տօնախմբութիւն մը կատարելու ի վիճակի
չեն «քիթապսըզ, ըլլալնուն համար:

Մեր տօնելիք փառաւոր հանդէսին աւե-
լի փայլ մը տալու ու միեւնոյն ատեն Առ-
նաւուտներուն խեղճութիւնը աւելի ցայտե-
ցնելու համար արգեօք լաւագոյն ըլլա՞ր
որ այդ հանդէսին հրաւիրենք նաեւ Ալպա-
նիոյ կրթական նախարար Պ. Կիւրաքունքօյին
եւ մեծանձնաբար իր հայրենակիցներուն
ընծայենք մեր երկնառաք տառերը զորս
հազար հինգ հարիւր տարիներէ ի վեր գոր-
ծածեցինք մեր տառապանքը պատմելու եւ
երգելու համար, եւ ի փոխարէն իրենցմէ ու-
զենք ինչ որ մենք չունինք եւ ինչ որ իրենք
ձեռք ձգեցին, առանց երկնառաք տառեր
ունենալու: